

Ավագ դպրոց  
Մասնագիտական կողմնորոշում. հանրակրթական դասընթաց  
Ծրագիր

**Ծրագրի նկարագրությունը և հիմնական դրույթները**

«Մասնագիտական կողմնորոշում» առարկան նախատեսվում է ավագ դպրոցի 12-րդ դասարանի համար, երբ սովորողներն արդեն ունեն որոշակի մասնագիտական կողմնորոշում:

Դասընթացը կազմակերպվում է երկու մասով.

1. սովորողը իրականացնում է նախագծեր, որոնք օգնում են սովորողին ուսուսումնասիրելու իր ընտրած մասնագիտության պահանջարկը, ուսումնական հաստատությունները, որոնք ապահովում են տվյալ մասնագիտության ձեռքբերումը, նախապես ծանոթանալու ֆակուլտետին, ծրագրերին
2. դիմորդ-շրջանավարտին անհրաժեշտ փաստաթղթային փաթեթի ուսումնասիրություն.

Նախագծերը կատարվում և ներկայացվում են դասերի ընթացքում: Ներկայացումները տեղադրվում են սովորողի բլոգում: Փաստաթղթային փաթեթը նույնպես սովորողը ուսումնասիրում, յուրացնում և քննարկում է դասերի ընթացքում (անհրաժեշտության դեպքում նախապես հավաքված փաթեթը, որը տեղադրված է Ավագ դպրոց վարժարանի ենթակայքում, ցանկը լրամշակվում է): Տնային հանձնարարություն չի տրվում:

**Նախագիծ 1.**

Իմ ընտրած մասնագիտությունը

- ինչու հենց այս մասնագիտությունը
- այս մասնագիտության առանձնահատկությունները
- ինչպես դառնալ մասնագետ
- ինչպես են աշխատանք գտնում այդ մասնագիտություն ունեցողները
- տարեկան քանի՞ մարդ է ավարտում այդ մասնագիտությամբ
- մասնագետի պահանջարկը աշխատանքային շուկայում
- մասնագետի դիրքը հասարակության մեջ
- այս մասնագիտության հայտնի դեմքերից (հատվածներ նրանց կենսագրությունից)
- Հայաստանի որ բուհում են ուսուցանում այդ մասնագիտությունը
- աշխարհում որ ուսումնական հաստատությունն է հեղինակություն վայելում
- էթե ավարտես ու մասնագիտությամբ աշխատանք չգտնես, ի՞նչ կանես

**Նախագիծ 2**

Իմ ընտրած բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը

- ինչու այս ուսումնական հաստատությունը
- հաստատության կայքը
- դիրքը մասնագիտական կրթության շուկայում
- հայտնի դասախոսները
- շրջանավարտները

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր  
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

- Էլ որտեղ կարող եմ (Հայաստան, արտերկիր) կրթություն ստանալ իմ ընտրած մասնագիտությամբ
- Վճարովի և անվճար կրթություն
- Ինչպես գտնել արտերկրում կրթություն ստանալու ճանապարհներ. Կայքեր, ՀԿ-ներ, դրամաշնորհային ծրագրեր
- տեղեկություններ այդ մասնագիտությամբ կրթություն ապահովող ուսումնական հաստատությունների մասին (համեմատություններ տարբեր բուհերի միջև)

### **Նախագիծ 3**

Իմ ընտրած ֆակուլտետը

- տեղեկություններ այդ ֆակուլտետի մասին (ուսումնական պլան, դասախոսներ). համեմատություններ տարբեր բուհերի միջև
- ֆակուլտետի դասախոսները որպես մասնագետներ
- ծանոթ սովորողներ այդ ֆակուլտետում, նրանց կարծիքները
- այցելություն ֆակուլտետ (մասնակցություն դասերին)

### **Գնահատումը**

**Գնահատումը կատարվում է երկու նշանոց սանդղակով՝ ստուգված և չստուգված:**

#### **Չստուգված են ստանում**

- ✚ առաջարկված նախագծերից որևէ մեկը չկատարած (կատարված է համարվում բլոգում հրապարակված աշխատանքը)
- ✚ փաստաթղթային փաթեթը չուսումնասիրած և չյուրացրած սովորողը՝ որը ստուգվում է սեմինար-քննարկման արդյունքում:

#### **Ստուգված կարող է ստանալ այն սովորողը, որը մեկ կիսամյակի կտրվածքով.**

- ✚ Իրականացրել է առաջարկվող նախագծերից առնվազն մեկը և արդյունքները հրապարակել է իր բլոգում:
- ✚ Ուսումնասիրել, լրամշակել է դրմորդ-շարջանավարտին անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը:
- ✚ Մասնակցել է դաս-քննարկումներին:

**Դասընթացի համար անհրաժեշտ կայքեր.**

[www.atc.am](http://www.atc.am)

[www.edu.am](http://www.edu.am)

Մասնագիտական ուսումնական հաստատությունների կայքեր